Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Անկախության հռչակագրի առթիվ

23.08.2024թ

Հայաստանի Հանրապետության սիրելի քաղաքացիներ,
34 տարի առաջ՝ 1990թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի Անկախության հռչակագիրը Հայոց նորագույն պատմության մեջ մի նոր փուլի սկիզբ դրեց՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը՝ հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:
Վստահ եմ, որ անցած դժվարին ճանապարհի ձեռքբերումները միասնական ջանքերով կկարողանանք պահպանել և դրանց հավելել նորերը:
Բոլորիս համար այս նշանակալի իրադարձության օրը շնորհավորենք միմյանց Հայաստանի Հանրապետության Անկախության հռչակագրի ընդունման 34-ամյակի կապակցությամբ: